

Գիրքը լուսապատճենահանվել է  
"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ Շերկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրք կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

library

ԴԱԼԻ ԱԼԻՎՈՒ ԿՈՂՈ, ԵՎ ՅԵՐ ՆԵՐՈՒՄ ԼԻՇԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱՎԱԼԽԵՅԱ ՏՐՈՅՈՒԹՅԱ ԳՈՐԾՈՒ ԵՎ, ԽԵՆԵՐԴ,  
ԸՆԴՊՈՅՑՔՎԱԾՈՒԵ, ԳՐԵՐ:

ԲՆԱԿ ԳՐԵՐԻ ԱՏԵԼՈՒՄ ՄԱԼԻՎԱՆԱԼՈ ԿՈՂՈ ԵՎ  
ԽՈՎՈԾ, "ՅՈՒՆԵՎԵՆԻԿԱՆ ԽԵՎՈՅՈՎԵՆ ԳՈՐԾՈՒ" ԿՈՎԱՆ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԾԱԼԳՅԱԿՈՒ ԵՎ, ՈՐ ՕԳՏԱԼԻՇ Ե՞Զ ՄԵՐ ԿՈՎԱՆՈՒ:  
ՅԵՎԿՈՎՈՒՄ ԵՎ ՀՈԽԵՐԻ ԸՆԴԳՐԱՆՆԵՐՈՒՆ:



ԳՐԵՐ ՄԵՐ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

A photograph of a woman with long, dark, curly hair. She is wearing a light-colored, possibly yellow or cream, sleeveless top. Her gaze is directed towards the right side of the frame, and she has a slight smile. The background is a soft, out-of-focus blue.

# ԲՈՒԱԿԱՆ ԿՈՍՄԵՏԻԿԱ



ԵՐԵՎԱՆ 1991

# ԲՈՒԱԱԿԱՆ ԿՈՍՄՈՏԻԿԱ

ԵՐԵՎԱՆ—1991

## ՎԵՐԶԱԲԱՆ

Անթառամ գեղեցկության ամենամեծ «գաղտնիքը» առողջ կենսակերպի պահպանումն է: Գեղեցկության ամենաշահաժան թշնամիները ծխախոտն ու ոգեզից խմիչքներն են: Ձեր տրամադրությունները ու հոգեվիճակը ամեն կերպ ազդում են ձեր արտաքինի վրա, իսկ ներքին հակառարյունները շուտափով ծնրանալու պատճառ են դառնում: Ամեն առավոտ ու երեկո 10—15 րոպեն ժամանակ գտնեք ամենապարզ կումբուխկայի ու մարմնամարզության համար: Հայելու մեջ նայեք ու ժպտացեք ձեր արտացոլմանը: Եղեք քննուշ և հմազիչ երկար-երկար տարիներ:

Ինչ հարուստ է բուսական  
աշխարհը, և ոքան վառ ենք  
մենք այն օգտագործում:

**Ակադեմիկոս Ն. Ի. ՎԱՎԻԼՈՎ**

## **ԱՇԽԱՐՀԻ ԶԱՓ ՀԻՆ ՄԻ ԱՐՎԵՍՏ**

Գեղեցիկ լինելու և դուր գաղու ձգտումը  
մարդուն ներմատուկ է ամենավաղնջական ժա-  
մանակներից: Մարդկությունը դեռևս չգիտեր, թէ  
ինչ է հացը, բայց արդեն լայնորեն օգտագործ-  
վում էին մաշկի թարմացման և մազերը ներ-  
կելու միջոցները:

Գեղեցիկ լինելու ձգտումը ուղեկցում է կնո-  
ջը ողջ կյանքի ընթացքում: Այդ գեղեցկությունն  
ինքներդ կարող եք արարել, եթե ունեք անհրա-  
ժեշտ գիտելիքներ և ցանկանում եք գեղեցիկ  
լինել: Օգտագործեք բնական միջոցները, որոնք  
բնությունն ինքն է ընձեռում: 'Երբեք ուշ չէ.  
միշտ էլ կարող եք գեղեցիկ լինել ու մնալ այդ-  
պիսին:

«Յուրաքանչյուրն է ցանկանում երկար ապ-  
ռել, բայց ոչ ոք չի ուզում ծերանալ»: Ուրեմն,  
ժամանակից շուտ չծերանանք, ուշադիր լինենք  
մեր հանդեպ, օգտվենք այն խորհուրդներից, որ  
մեզ համպի պահպանեզ ։ Ժողովրդական կոս-  
մերիկան, ինչպես և հանձնարարականներից,  
որ տպակած են ժամանակակից հայկական, ոու-  
սական, բոլղարական և լեհակած կոսմոտիկա-  
կան գիտությունից:

## ՄԱԶԵՐԸ ԿՆՈՉ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԱՐԴԱՐԱՆՔՆ ԵՆ

Մազերի վիճակը մեծապես կախված է գլխի  
մաշկի խնամքից, որաեղ գտնվում են մազար-  
մատները:

**ՄԱԶԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ:** Գլուխը պետք է լվա-  
նալ փափուկ (անձրևի, ձյան կամ եռացած) ջր-  
րով: Կոշտ ջուրը փափկացնելու համար ջրով լի  
թասի մեջ լցրեք 1 թեյի գյալ կերակրի սողա կամ  
անուշադրի սպիրտ: Այդպիսի ջուրը շատ լավ  
ճարպագերծում է մազերը: Եթե մազերը կանո-  
նավոր կերպով լվանաք փափուկ ջրով, որանք  
չեն փշրվի, ու գլխի մաշկը չի գրգուի:

Գլուխը փափուկ ջրով կարող եք լվանալ նաև  
քիմիական գանգրացումից հետո, իսկ լվանա-

լուց հետո ողողեք կեչու կամ եղինջի թուրմով:

Թասի մեջ դրեք նախապես տաք զրով թրջած կեշու ավել և վրան եղջուր լցրեք: Լողանապու ընթացքում կեչու ճյուղերից ու տերևներից կառաջանա բուրավետ թուրմ: Դրանով ցողեք ձեր մազերը: Սա հատկապես օգտակար է ~~աշխատ~~ նը, եթե ճյուղերի վրա բողբոջներ են լինում: Կեշու թուրմից մազերը փափկում են, դատնում բամբականման:

Չափազանց օգտակար է գլուխը լվանալ եղինջի թուրմով: Դրա համար անհրաժեշտ է թարմ եղինջը լցնել թասի մեջ և եղջուր ավելացնել. կես ժամից թուրմը պատրաստ է: Գլուխը եղինջի թուրմով լվանալու դեպքում օճառ չեն օգտագործում:

**ՄԱԶԵՐԻ ԹԵՓԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**  
լվանալուց 1 ժամ առաջ գլխներիդ շաղգամի յուղ (կամ արևածաղկի ձեթ) բաեք: Լավ կլինի, եթե ցայելու համար նախառեսված զրին լորենու թուրմ ավելացնեք: Եթե թեփն անհագըստացնում է, կարող եք մազերը լվանալ հինայի շամպունով: Կարող եք նաև գլխի մաշկը շփել մետևալ խոտերի տաք թուրմով.

1. Եղինջի տերևներ՝ 1 բաժին, կոասուկի արմտիք և ցողուն՝ 1 բաժին, գալլուկի կոներ՝

1 բաժին, ձիաձետի դաշտախոռն՝ 1 բաժին, Բազարտերևիկ՝ 1 բաժին։ Այդ խառնուրդից 1 ճաշի գդալից ավելացնել 1 թեյի բաժակ չուր ու եռացնել։

2. Տրորեք մեղվամուշկի ծաղիկներն ու ցողունը (400 միլիլիտր ջրին՝ 1 թեյի գդալ խոտ), թրմեք 1,5 ° ժամից ոչ պակաս, քամեք և ցողեք մազերը օրումնչ։

**ՄԱԶԵՐԸ ԹԱՓՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ** առաջարկում ենք հետևյալ դեղատումը։ 1 թեյի գդալ մեղր, 1 թեյի գդալ շաղցամի յոտ, 1 թեյի գդալ հեղուկ օճառ և գլուխ սոխի հյութ։ Սուազված խառնուրդն օգտագործվում է որպես թրջոց։ Տևողությունը՝ 1,5—2 ժամ։

**ՄԱԶԵՐՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ** խցնորեն օգտագործվում է բուժախոտերի կոսմետիկան։ Բարերար ազդեցություն են թողնում հետևյալ խառնուրդների եփուկները։

1. 15 գրամ գայզուկի կոներ, 10 գրամ վաղենակի ծաղիկներ և 20 գրամ նույն բույսի մանրան արմտիք (այս խառնուրդի 1 ճաշի գդալը եփել 2—3 բաժակ ջրում)։ Եփուկը քամեք ու մազերը դրանով ցողեք կամ քսեք զյուհին շաքարը 2 անգամ, 1—2 ամսվա ընթացքում։

2. Հավասարաշափ խառնեք եզան լեզուն, երիցուկը, եղինջը, եղեսպակը և սոսամբարը։ Այդ խառնուրդից 1 ճաշի գդալ եփեք 1 բաժակ

ջրում, 1 ժամ թրմեք ու քամեք: Թուրմի մեջ ա-վելացրեք սև (աշորայի) հացի փափուկ մա-սից, որպեսզի խյուս դառնա: Այդ խառնուրդը տաք-տաք քսեք մազարմատներին, գլխաշորով կապեք ու թողեք 2 ժամ: Ապա գլուխը լվացեք տաք ջրով, առանց օճառի ու մազերը չորացրեք բաց օդում:

Մազերի ամրացման և աճի համար օգտա-կար են խոտեղի թետևակ հավաքածուները.

**Հավաքածու № 1.** Կոտտուկի ցողուն և արմ-տիք՝ 4 բաժին, վաղենակի ծաղիկներ՝ 4 բաժին, գայլուկի կոներ՝ 3 բաժին: Խառնուրդի 55 գրամը եփել 1 լիտր ջրում: Գլուխը լվանալ շաբաթը 1—2 անգամ:

**Հավաքածու № 2.** Կոտտուկի ցողուն և արմ-տիք՝ 1 բաժին, գայլուկի կոներ՝ 4 բաժին, ճահ-ճային խնկեղեգի կոճղարմատ՝ 1 բաժին:

Խառնուրդից 8 ճաշի գդալ եփել 1 լի-տըր ջրում: Գլուխը լվանալ շաբաթը 3 անգամ:

**Հավաքածու № 3.** Ուտենու կեղև՝ 1 բաժին, կոտտուկի կոճղարմատ և արմտիք՝ 1 բաժին:

Խառնուրդից 4 ճաշի գդալ եփել 1 լիտր ջրում: Գլուխը լվանալ 3 անգամ:

**Հավաքածու № 4.** Եղինջի տերևներ՝ 3 բա-ժին, տատրակի տերևներ՝ 3 բաժին:

Խառնուրդից 8 ճաշի գդալ եփել 1 լիտր ջր-ում: Գլուխը կարելի է լվանալ շաբաթը 3 ան-

գամ: Եփուկը հանգստացնում է զիսի քորը և  
պակասեցնում թեփը:

## ՔՍՈՒՔՆԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

Քսուքների շնորհիվ բուժիչ նյութերը ներծծվում են մաշկի մեջ և բարեկալում մազերի աճն ու ամրությունը: Եթե մազերը չոր են, շարդվող ու քայքայած, խորհուրդ է տրվում և ձվի դեղնուցից և 1 ճաշի գդալ գեղշակի յուղից պատրաստված քսուքը մազերի վրա պահել 3 ժամ, այնուհետև լվանակ չեզոք օճառով: Քսուքն օգնում է նաև թեփի վերացմանը:

Ամա մեկ այլ քսուք. 20 գրամ գերշակի յուղի, 20 գրամ ձիթայուղի և 10 գրամ շամպունի խառնուրդը բամբակով քսեր գլխին: 2 րոպե մազերը սանրեք տարրեր ուղղություններով: Այնուհետև գլուխը կապեք պողիեթիղինե թաղանթով ու սրբիչով, որպեսզի տաք մնա: 30—60 րոպեից գլուխը լավ լվացեք:

## ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿՈՒՄ

1. Սրիցուկի թուրմը մազերին տալիս է վառ ուկեգույն երանգ, թարմացնում, քողարկում է թեփն ճերմակությունը: Թուրմը պատրաստելու համար 1 լիստ ջրում 5 րոպե եռացրեք 2 ճաշի

գդալ երիցուկ, ապա քամեք ու հովացրեք: Եթե ուզում եք գույնն ավելի մուգ լինի, եփեք 15 րոպե, 300 միլիլիտր ջրում: Սկզբում փորձեք ականջների հետևի մազափնջների վրա, հետո միայն թուրմը քսեք ամբողջ մազածածկույթին և պահեք 15—30 րոպե՝ կախված աճիրաժեշտ երանգից:

2. Մուգ գույնի մազերը, մանավանդ եթե թերթևակի ճերմակել են, լվանալոց հետո թրջեք ալոեի կամ թեյի թուրմով:

## ԴԵՄՔԻ ՄԱԾԿԸ

Գեղեցիկ կնոջ մաշկից  
նուրբ, շքեղ ու գեղեցիկ Բյուս-  
վածք չկա՞

## ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ

Մաշկն արտացոլում է մարդու ճերաշխարհը  
և առողջական վիճակը: Ուստի, մաշկին պիտի  
հետևեք ոչ միայն գրավիչ երևալու, այն, ամե-  
նագլխավորը, ձեր առողջությունը պահպանե-  
լու համար:

## ՄԵՐ ՆԱԽԱՏԱՏԵՐԻ ՀՈՍՑՈՆՆԵՐԸ

Մեր նախատատերի ժամանակներում հա-  
մարյա յուրաքանչյուր կին ինքն իր կոսմոսո-  
լոգն էր: Նրանք գիտեին՝ ինչպես օգտվել դաշ-  
տի, անտառի, ծաղկուն մարգագետնի շնորհնե-  
րից, որպեսզի պահպանեն իրենց գեղեցկությու-  
նը: Մաշկի վրա բարենպաստ ազդեցություն են

ունենում տնական լոսյոնները, որոնք կանայք օգտագործել են տասնամյակներ առաջ:

## ԾԱՐՊՈՏ ՄԱԾԿԻ ՀԱՄԱՐ

1. 1 ձվի հարած սպիտակուցին կաթիլ-կաթիլ ավելացրեք կես բաժակ օդեկողոն և 1 ճաշի գդալ արոս (խորմա, սերկնիլ, կիտրոն): Այդ խուսով դեմքը տրորում են երեկոյան, բայց ժամանակ առ ժամանակ ճարպուտ մաշկը կարող եք մաքրել նաև վարունգի թթվածրով, հացի կվասով, թթված կեշու հյութով:

2. Սրոհունդը, տատրակը, հազարատերնիկը և եղեսպակը խառնեք հավասար բաժիններով: Այդ խառնուրդից 1 ճաշի գդալ եռացրեք 1 թեյի բաժակ ջրում (ապակե կամ ջնարակած ամանում), պինդ փակեք, շորով փաթաթեք ու թողեք մնա ամրող գիշեր: Հաջորդ օրը քամեք ու թուրմին ավելացրեք 50 գրամ օդեկողոն:

3. Կաղնու և ուռենու կեղենի թուրմին (1 թեյի գդալին՝ 200 գրամ ջուր) խառնեք 1 ճաշի գդալ քացախ ու բացեք ջրով՝ 1:10 հարաբերությամբ: Դեմքը կարող եք շփել այդ թուրմով, իսկ շոգ եղանակին՝ նույնիսկ լվանալ:

4. Կես լիտր ձիթապտղի յուղին ավելացրեք 150 գրամ շուշանի ծաղիկներ ու մատղաշ տերևներ (յուրաքանչյուրից կես բաժին): Թրմեք ա-

պակե ամանի մեջ 1 ամիս (պարբերաբար թափահարելով): Եթե լողանակոց հետո այդ թուրմով շփեք մաշկը, այն կլինի մատաքանաման ու հարթ (շատ ճարպու մաշկի համար է):

5. Երիցուկի թուրմին (1 ճաշի գդալ երիցուկին՝ 250 գրամ ջուր) ավելացրեք կիտրոնի հյութ, 30 գրամ քաֆուրի սպիրտ, 2-ական գըրամ բորաթթու և բորակ: Այս խառնուրդով տրորեք դեմքը առավոտյան լվացվելոց հետո (նորմալ և ճարպու մաշկի համար):

6. Չիաձետի, եռագույն մանուշակի, վաղենակի, երիցուկի և կաղնու (կամ ուռենու) մանրած կեղևի հավասար մասերից խառնուրդի 1 լիքը ճաշի գդալին ավելացրեք 1 թեյի բաժակ եռցուր, տաքացրեք 10—15 րոպե, թողեք թրմվի ու քամեք: Այդպիսի եփուկով կարող եք շփել ցանկացած նոր առաջացող կճճիռ: Եթե եփուկին օղի ավելացնել (1:1), կատացվի լոսյոն ճարպու և նորմալ մաշկի համար:

7. Կիտրոնի կայթ (ցանկացած մաշկի համար). ապակե ամանի մեջ 1 ձկի դեղնուցը լավ հարեք, կաթիլ-կաթիլ ավելացրեք 1 մեծ կիտրոնի հյութը, ապա հարեք 100 գրամ կաթի սերուցք և նույնաբան էլ սպիրտ (օդեկղուն, օղի): Խառնուրդը երկար ժամանակ կարող եք պահել մութ տեղում: Դեմքը շփում են առավոտյան և երեկոյան:

## ԱԼՈԵՆ ԵՎ ԿԵՐՊԱՏՐԱՅԻ ԽՈՇՈԽԻՐԴԸ

Կլեոպատրայի կոսմետիկական դեղատուները մեծ ճանաչում ունեին Բին հոռոմեոնիների շըրջանում: Գեղեցկության գաղտնիքը ալոեից պատրաստված քսուք էր: Մինչև օրս ել Հյուսիսային Աֆրիկայի և Սիցիլիա կղզու բնակչութիները կոսմետիկայի համար օգտագործում են այդ բույսի մսու մասերը: Ժամանակակից գիտությունը պնդում է, որ ալոեն բնական կոսմետիկական միջոց է, որը մաքրում է մաշկը՝ թեթևակի նեղացնելով ծակութիները: Ակուի քսուքը կազդուրիչ և հանգստացնող ազդեցություն է ունենում: Կլեոպատրայի քսուք պատրաստելու համար 5 գրամ ալոեի փոշին զգուշորեն բացեք 40 միլիլիտր թորած ջրում, ավելացրեք 20 միլիլիտր վարդաջուր և 10 գրամ մեղր: Խառնուրդով ամանը դրեք ջրային բաղնիքում, ավելացրեք 100 գրամ խոզի թարմ, հաղած ճարապ ու տաքացրեք՝ հետևելով, որ խյուսը շատ չտաքանա: Պատրաստի քսուքը, որ ալոեի բույր է ունենում, լցրեք բանկայի մեջ ու պահեք սառնարանում, օրը 1 անգամ քեզ դեմքին ու պարանոցին:

Ակուի հյութն անփոխարինելի է չափազանց ճարպու մաշկի դեպքում, դրանից արված թըրջոցները վերացնում են մաշկի գրգռվածությունը, բորբոքումները և պղուկները: Ակուի հյութը դեմքը պահպանում է թոշնելուց:

## ՕԾԱՌԻ ՓՈԽԱՐԵՆ

Չոր, շուտ բորբոքվող մաշկի համար օգտագործում են ցորենի թեփը: Այդ թեփից մի գլազ լցնում են ձեռքի խոճավ ափին, սրբում ու շփում դեմքը: Եթե մաշկը մի փոքր վարդագունում է, այն ողողում են գով ջրով ու զգուշորեն արբում փափուկ տրիչով: Այդպիսի մի քանի լվացումներից հետո (1 անգամ՝ առավոտյան կամ երեկոյան) մաշկը դառնում է հարթ ու փայլատ: Եթե թեփ չկա, կարող եք օգտագործել մանրած գարու թեփուկները կամ ցորենի խաշուկը. 1 բաժակ ցորենի հատիկների վրա լցնում եք 2 լիտր ջուր ու եռացնում այնքան, որ հնդուկը կիսով չափ պակասի: Եփուկը քամում եք ու դնում սառը տեղ: 3—4 բուր գարու թեփուկի խաշուկը կփոխարինի օճառին նաև լոգանք ընդունելիս: Լողանալոց մի քանի ժամ առաջ թեփուկներին 1,5—2 լիտր ջուր ավելացրեք, ապա նույնքան էլ ավելացնելով, եռացրեք, քամեք ու եփուկը լցրեք լոգնոցը:

Չափազանց նուրբ ու հեշտ գրգովող մաշկի դեպքում 1 ճաշի գով եզան լեզվի, երիցուկի, դաղձի խառնուրդը եփում եք 1 բաժակ ջրում, ծածկում ու թրմում 10 րոպե, ապա խառնելով ավելացնում 1 գլազ կարտոֆիլի օվա: Դեմքին քսել լվացվելոց կես ժամ առաջ, ալնուինեն մաքրել եռջրով կամ սառը թուրմով:

## ԵՐԲ ԱՐԵՎԸ ԾԱՏ ՈՒԺԵՂ Է

1. Եթե մաշկը զգայուն է ու նուրբ, գարնա-  
ճը չրով լվացվելու փոխարեն տրորեք այն ե-  
ռիցուկի կամ լորենու ծաղկի թուրմով:

2. Կեչու բողբոջների թուրմով ճարպոտ մաշ-  
կը շփեք օրը 2—3 անգամ: Թուրմը՝ 1 ճաշի  
գդալ կեչու բողբոջներ, 5 թեյի գդալ ջուր, 2  
ճաշի գդալ կեչու տերևների թուրմ:

3. Քնելուց առաջ օգտակար է ճարպոտ մաշկը  
շփել ձիաձետի եփուկով: Եփուկը՝ 1 ճաշի գդալ  
ձիաձետի վրա լցնել 1 թեյի բաժակ ջուր, ե-  
ռացնել 20 րոպե ու քամել:

4. Քամահարված, տաքացած դեմքը, հովա-  
նալուց հետո շփեք սենյակային ջերմանտիճա-  
նի թեյով:

5. Եթե դեմքն անընդհատ քրտնում է, լավ է  
մաշկը տրորել սրոհունդի թուրմով, խոտի 1  
ճաշի գդալին՝ 1 բաժակ եռջուր:

## ՊԵՊԵՆՆԵՐԸ ԵՎ ԲՄԵՐԸ

Ժողովրդական բժշկությունը մաշկը ճեր-  
մակացնելու համար առաջարկում է մաղաղա-  
նոսի հյութը: Մանր կտրատած մաղաղանոսի  
վրա եռջուր լցրեք, թողեք 20—30 րոպե, քամեք  
ու դրանով դեմքը տրորեք օրը 2—3 անգամ:

Խատուտիկի հյութը նույնապես ժողովրդական դեղամիջոց է: Մայիսից մինչև օգոստոս դրանով կարող եք շաբաթը մի քանի անգամ շփել ցանկացած պետքն ու պիզմենտային բիծ: Եթե հյութը չորանա, դեմքը կարող եք շփել թթված կաթով կամ շիճուկով: Կարող եք օգտագործել նաև խատուտիկի մատղաշ ծաղիկները. 2 ճաշի գոյալը 30 րոպե եռացրեք կես լիտր ջրում, քամեք ու դրանով դեմքը շփեք առավոտյան և երեկոյան:

**Հեղինենի խոտ.** 1 թեյի գոյալ մանր կտրատած արմտիքի և տերևների վրա 1 բաժակ սառը ջուր լցրեք: Խառնուրդը թողեք 1 ժամ, ապա 10 րոպե եռացրեք, քամեք և քսեք պետքներից ու բծերին օրը 2 անգամ, մինչև դրանք անհետանան:

Պետքներն ու բծերը կգունաքափվեն, եթե ամեն օր, նախքան լվացվելը, դեմքին քսեք ու 5 րոպե թողեք տարբեր հյութեր ու քսութներ՝ կաթի շիճուկ, հացի կվաս, վարունգի հյութ (չոր մաշկի դեպքում):

Եթե մաշկը ոչ միայն պատած է պետքնեներով ու բծերով, այլև գումառ է, կարող եք դիմակ պատրաստել ճակնդեղի հյութից: Դրա համար պետք է դեմքի մաշկը մաքրել ու տրորել ճակնդեղի շերտիկով: Եթե մաշկը չորանա, քըսեք բարակ շերտով քսուք:

## ԾԱՂԻԿՆԵՐԸ ՆՈՍՄԵՏԻԿՎՅՈՒՄ

Ծաղիկները, որոնց գեղեցկությունն աչք է շոյում, կարող են օգտագործվել կոսմետիկայում: Դրա համար պիտի ընտրեք քարմ ծաղիկները կամ էլ ստվերում չորացրածները: Թարմ ծաղկաթերթերը մանրում են մսաղացով, չորերը՝ սրճաղացով: Ծաղիկները քաղում են վաղ առավոտյան կամ արևը մայր մտնելուց հետո: Թուրմի համար անհրաժեշտ է 1 բաժին ծաղիկ և 10 բաժին ջուր: Մանրած հումքը լցնում են թերմոսի մեջ, ավելացնում եռման ջուր, կափարիչը փակում, կես ժամից թուրմը պատրաստ է: Այս հովացրեք մինչև սենյակային ջերմաստիճան ու քամեր: Չուրը կարելի է փոխարինել կաթով: Թուրմը կարող եք պահել սառնարանում մինչև 3 օր: Թուրմեր պատրաստելու համար հաճախ օգտագործում են ձեռք: 'Բույսերը լցնում են թասի մեջ, վրան ավելացնում ձեռք (եգիպտացորենի, արևածաղկի, ձիթապողի), թասը տեղավորում սառը ջրով լի կաթսայի մեջ ու դնում մարմանդ կրակի վրա: Չուրը եռալուց հետո, ձեռքը ևս 30 րոպե շոգեհարում են, ապա ամուր փակում ու թողնում մութ ու սառը տեղում: 1 շաբաթ անց քամում են. յուղային թուրմը կարելի է պահել պաղ ու մութ տեղում մինչև 1 ամիս:

Թուրմերն օգտագործում են մաշկը բվանութու, շփելու, քրջոցների և դիմակների համար։ Զրային թուրմից կարելի է սառցե խորանարդիկներ պատրաստել։ Կոռմետողոգները խորհուրդ են տաղիս առավոտյան, լոգանք ընդունելուց հետո, դրանցով շփել դեմքի, պարանոցի, կրծքի մաշկը։ Դև ճպաստում է կճճիռների հարթմանը։

Կապույտ տերեփուկը (ծաղկաքերթերը) օգտագործվում է ծակոտիների և ոտքերի երակների լայնացման դեպքում, կոպերը և աչքերը շրջապատող մաշկը խնամելու համար, մազերի թեփակալման և թափվելու դեպքում։

Եթե ծակոտիները լայնացած են, օրը 2—3 անգամ դեմքը շփում են զրային թուրմով, կամ ավելի լավ է, դրանից պատրաստված սառցե խորանարդիկներով։ Երակների լայնացման դեպքում դնում են սենյակային ջերմաստիճանի թրջոցներ։ Կոպերի բորբոքման դեպքում տերեփուկի յուղային թուրմի մեջ թրջած տամպոնները դնում են փակ աչքերին ու պահում 10—15 րոպե, ապա մաքրում են զրային թուրմի մեջ թրջած տամպոնվ։

Վաղենակը օգտագործում են ճարպոտ մաշկի և ճարպակետիկների դեպքում։ Լույսոնը՝ 3 թարմ ծաղիկների վրա լցրեք 100 միկրոլիտր սալիցիային սպիրտ, ապա 1 օրից քամոք։ 1 քաժակ եռջրի մեջ լցրեք 1 ճաշի գլազ թուրմ ու

**խառնեք:** Ծարպակետիկներին տաք լուծուցը  
քսեք առավոտյան ու երեկոյան:

Երիցուկը հակաբորբոքային, հանգստացնող և  
հականեխիչ հատկություն ունի: Այն կարելի է  
օգտագործել ճարպակետիկների և յարախա-  
պալարների դեմ: Հնդունված են թրջոցները, բա-  
րերար ազդեցություն է ունենում նաև թուրմի  
գոլորշին: 1 ճաշի գդալ երիցուկը կես լիտր ջը-  
ռում եռացրեք 20 րոպե, դեմքը պահեք գոլոր-  
շու վրա՝ գլուխը սրբիչով ծածկելով: Դրանից  
մետք դեմքի մաշկը շփեք սպիրտով (օդիով):

Չափազանց չոր, գրգովող մաշկի վրա բարե-  
րար ազդեցություն են ունենում երիցուկի յու-  
ղային, ինչպես և կաթով պատրաստված թուր-  
մերը: 10 տակ ծաղված թանզիֆի մեջ քրի հա-  
մար անցք անելով՝ դիմակ պատրաստեք, թղր-  
շեք 36 աստիճանի թուրմով, մի փոքր քամեք և  
դրեք դեմքին ու պարանոցին: 20 րոպեից դի-  
մակը հանեք, դեմքը մաքրեք թուրմով, ապա՝  
սաղցե խորանարդիկով:

## **ԿՈՄՄԵՏԻԿԱ ՄԱՐԳԻՑ**

Ամուսնը կարող եք օգտագործել ոչ միայն  
ծաղիկներ, այլև բազմատեսակ հատապուղներ,  
մրգեր ու բանջարեղեն:

**Հատապուղների, մրգերի և բանջարեղենի**

դիմակները հրաշապի մաքրում, սնուցում ու փափ-կացնում են մաշկը, խթանում նյութափոխանա-կությունը, դեմքը թարս է մնում, հարթվում եթ կնճիռները:

Եթե դիմակն առաջին անգամ եք օգտագոր-ծում, փորձեք՝ ձեր մաշկը որքան է զգայուն դրա հանդեպ: Դրա համար նախ բարակ շեր-տով հատապտղի խյուս քսեք դեմքին: Ավելի լավ է դիմակը դնել պառկած, հանգիստ վիճա-կում: Դրանից առաջ պետք է դեմքը լավ լվա-նալ: Դիմակը պահեք 20 րոպե, ապա տանպոն-ներով մաքրեք, լվացեք ջրով, զգուշորեն չո-դացրեք սրբիչով և աչքերի շուրջը սնուցող քը-սուր քսեք:

Աչքերի և քթի համար կտրվածք ունեցող թանգիֆի կտորը թաթախեք հատապտողների հյութի կամ խյուսի մեջ, մի քիչ քամեք (հյութը շպիտի լցվի աչքերը) և դրեք դեմքին ու պա-րանոցին:

## ՀԱՏԱՊՏՈՒՂԵՐԻ ԴԻՄԱԿՆԵՐ

**Մ**երին ունիվերսալ կոսմետիկական միջոց է: Նորմալ մաշկի դեպքում մորու հյութից դի-մակներ կարելի է դնել շաբաթը 2—3 անգամ: Ծարպու ու լայնացած ծակոտիներով մաշկի համար խյուսը պատրաստում են մորու, տրո-

րած պյուղներից ու ձվի հարած ապիտակուցից: Եթե մաշկը չոր է, մորուն ավելացնում են մողր կամ կաթի սերուցք:

**Գևոնակակը** մաքրում է մաշկը, խոնավացնում և սնուցում է այն:

Եղակը և կարմիր հաղարջը օգտագործվում են մաշկը ճերմակացնելու և պիգմենտային բծերն ու պեպենները գունաթափելու համար:

## ԲԱՆՁԱՐԵՂԵՆԻ ԴԻՄԱԿՆԵՐ

**Վարոնգի դիմակն** օգտակար է մաշկի բռնոր տեսակների և բողոր տարիքների համար: Դրանից հետո պետք չէ դեմքը լվանալ: Կարելի է վարոնգի կեղևը մաքրել ու շերտը քսել դեմքին: Կարելի է քերիչով քերել վարոնգը և 1 ձվի սպիտակուցը խառնել երկու գյաղ վարոնգի հյութի մեջ:

**Գազարի դիմակ:** 2 գազարը լավ լվացեք, քերեք ու խառնեք 1 ձվի սպիտակուցի, 1 գյաղ ձիթապտղի յուղի կամ կաթի ու մի քիչ օպայի մեջ: 20 րոպեից դիմակը մաքրեք սառը ջրով: Գազարի դիմակն օգտակար է ճարպու ու ճարպակետիկներով, ինչպես և գունատ ու թոշնած մաշկի համար:

**Լողիկի դիմակ:** 1—2 թարմ լողիկ օղակաձև կտրատեք, շերտերը կացրեք դեմքին ու պարա-

նոցին և ծածկնք թանգիփով: 20 րոպեից դեմքը լվացեք նախ տաք, ապա սառը ջրով:

Կանաչ սպաքի դիմակներն օգտագործվում են չոր մաշկի դեպքում: Մանր կրտրառած սալաթի տերևների վրա ձիթապտղի յուղ ու մի քանի կաթիլ կիսորոնի հյութ լցրեք: Դիմակը հանելուց հետո դեմքը լվացեք նախ տաք, ապա սառը ջրով:

## ՄՐԳԵՐԻ ԴԻՄԱԿՆԵՐ

Խնձորի կեղևը մայրեք (1—2 հատ), քերեք քերիչով: Եթե մաշկը չոր է, խնձորի խյուսին 1 ճաշի գդալ ձիթապտղի յուղ ավելացրեք կամ էլ կաթի սերուցք, իսկ ճարպու մաշկի դեպքում՝ 1 ձվի սպիտակուց: Դիմակը դեմքին ու պարանոցին պահեք 15—20 րոպե:

Դեղձը հարթեցնում ու փափկացնում է մաշկը (մեկ ճաշի գդալ գարու աղյուրին՝ 1 դեղձի հյութ և հում կաթ): 20 րոպե պահելուց հետո դիմակը լվանալ սառը ջրով:

Դեղին կեռասն օգտագործվում է սովորական չոր մաշկի դեպքում: Խյուսը խառնում են արևածաղկի ձեթի հետ: Կմճիտների և լայնացած ծակուտիների դեպքում դիմակ պատրատելու համար վերցնում են կես բաժակ կեռա-

սի խլուս, 1-ական թեյի գդալ մեղրաջուր և կիսորոնի հյութ:

Բայի հյութն օգտագործվում է ճարպու մաշ-կը խճամելու համար:

## ԱՉՔԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Պայծառ, շողշողուն աչքերը զարդարում են նոյնիսկ ամենասովորական դեմքը: Խորհուրդ ենք տագիս աչքերն ամեն օր լվանալ թեյի թուր-մով: Դա հանում է աչքերի հոգմանությունը և թույլ չի տաղիս, որ կարմրեն: Լորենու ծաղիկը և երիցուկը (1-ական ճաշի գդալ՝ 1 բաժան ջրում եռացրած) օգնում են պահպանելու աչքերի փայ-լը: Բարերար ազդեցություն են ունենում կաթի թրջոցները, որոնք վերացնում են բողքորբվածու-թյունը. թանգիիֆի կտորը թաքախում եք կաթի մեջ և 4—5 րոպե պահում աչքերի վրա, ազնու-հետև աչքերը ցողում եք սառը ջրով ու չորաց-նում: Աչքերի շուրջը ճարպու քսուք եք քսում:

Աչքատակերի պարկերն ու զանազան ու-ուուցքները կարող են տարրեր ներդին հիվան-դությունների հետևանք լինել: Բայց հաճախ որ-րանք պարզապես հոգնածության արդյունք են: Այդ դեպքում չափազանց օգտակար են եղես-պակի թրջոցները. 1 թեյի գդալ եղեսպակը ե-ռացրեք 100 միկրոլիտր ջրում ու փակած վիճա-

կում պահեք 10 րոպե: Թուրմի մի մասը պահեք սառնարանում, իսկ մյուսը թեթևակի տաքացրեք: Բամբակի կտորը թրջեք տաք թուրմով ու դրեք աչքերին: 10 րոպեից սառը թրջոց դրեք: Ցուրաքանչյուր 15 րոպեն մեկ հաջորդաբար փոխեք տաք ու սառը թրջոցները: Ավելի լավ է թրջոցները դնել քնիկոց առաջ:

Լավ արդյունք են տալիս նաև մաղաղանոսի ու կարտոֆիլի դիմակները: Մաղաղանոսի թարմ կանաչ տերևները մանր կտրատեք ու դրեք աշքատակերի պարկերի կամ ուռած կոպերի վրա, ծածկեք բամբակով ու թողեք 10—15 րոպե:

Կարտոֆիլը լավ քերեք ու դրեք աչքերին: Կարող եք նաև 2 թեյի գդալ քերած, ჩում կարտոֆիլը խառնել 2-ական թեզի գդալ ալյուրի և կաթի ჩետ, դնել աչքերին և պահել 10—15 րոպե:

Արյան շրջանառությունը բարեկավում է հետևյալ դիմակը. մաղաղանոսի մանր կտրատած տերևներն ու ցողունը (1 թեյի գդալ) խառնեք թթվասերի հետ, (2 թեյի գդալ), խյուսը 20—30 րոպե դրեք ուռած կոպերին ու աշքատակի պարկերի վրա, այնուհետև դեմքը ցողեք սառը ջրով ու քսուք քեր:

## ՄԻ ՄՈՌԱՑԵՔ ՊԱՐԱՆՈՅԻ ՄԱՍԻՆ

Դեմքի խնամքը կզակով չի սահմանափակվում: Նույնքան խնամք եւ պահանջում պարանոցը, լանջամասը և կուրծքը:

Կտավատի սերմերից պատրատված դիմակը մաշկը դարձնում է նույր ու հաղթ: Կտավատի սերմերը (2 ճաշի գոյալը՝ 2 բաժակ ջրին) եփեք մինչև խյուս դառնապը, դրանով տրորեք դեմքը և ծածկեք յուղաթղթով ու խավոտ սրբիչով, այնուհետև լվացեք ջրով ու քսով քսեք:

Բարերար ազդեցություն են ունենում բանջարեղենի դիմակները. 4 ճաշի գոյալ թարմ, մանր կտրատած մաղաղանոսի վրա լցրեք 250 գրամ տաք կաթ: Ստացված խյուսը քսեք շորի կտորին ու դրեք պարանոցին ու կրծքի վերին մասին: Ծորի մյուս կտորը թրցեք կաթով, դրեք վրան, փաթաթեք խավոտ սրբիչով ու թողեք 20 ռոպե: Մաշկը լվանալու կարիք չկա. չորանալուց հետո վրան բարակ շերտով սնուցող քսով քսեք:

Տաք, տրորած կարտոֆիլը մաքրում ու թարմացնում է մաշկի վերին մասը՝ էպիդերմիսը, դարձնում այն հաղթ և պիրկ:

Հում կարտոֆիլի դիմակը նրբացնում, խոնավացնում ու հարթեցնում է հատկապես չոր ու թեփոտ, գրգովելու և բորբոքվելու հակված մաշկը:

Եթե դեմքի այրված մասին անմիջապես դնեք քերած կարտոֆիլ, դա ոչ միայն կթեռնացնի ցավը, այլև կկանխի ուռուցքների առաջացումը:

Լորու դիմակը հարմար է մաշկի բողոք տևակներին. Մի բաժակ լորին եփեք, տաք վիճակում լավ տրորեք ու անցկացրեք մաղով, վրան ավելացրեք 1-ական ճաշի գդալ որևէ ձեռք ու կիտրոնի հյութ: Դիմակը մաշկի վրա պահնեք 20 րոպե, այնուհետև լվացեք նախ տաք, ապա՝ սաւը ջրով: Դիմակը ճերմակացնում, թարմացնում է մաշկը, կանխում վաղաժամ ծերացումը: Խորինուրդ ենք տալիս դեմքը լվանալ լոքաջրով, եթե մաշկը զգայուն է ու չոր: Զրին մի քիչ ձեռք ավելացրեք:

## ԳԵՂԵՑԻԿ ԶԵՌ-ՔԵՐ

Բոլոր ձեռքերը չեն, որ կատարյալ ձև ունեն, բայց մաշկի տեսակը և եղունգների գեղեցկությունը լիովին կախված են կնոջ ցանկությունից ու ջանքերից:

Մի քանի օգոտակար խորհուրդներ.

1. Եթե ձեր ձեռքերի մաշկը չափազանց չոր է, կոշտացած ու թեփուտ, ամեն անգամ լվացվելուց հետո այն շփեք վարունգով, այնուհետև տրորեք գիցերինի ու կիտրոնի խառնուրդով:

**2. Խորհուրդ է տրվում ձեռքերը լվանակ խաշած կարտոֆիլի ջրով:**

**3. Ծարաֆը 1—2 անգամ պարտադիր են յուղային բաղնիքները. ձեռքերը 10—15 րոպե պահեք արևածաղկի տաք ձեթի մեջ: Եթե եղունգները շուտ կուրովող են, ձեթին 4—5 կաթիկ յոյ ավելացրեք:**

**4. Մասշկը ճաքճեղկու և կոչտանապու դեպքում օգտակար է ձեռքերը Բում կաթով թրջելը:**

**5. Ձեռքերի քսուք, որը կարող եք ինքներդ պատրաստել. տերևների խառնուրդը (վաղենակ, խատուտիկ, եզան լեզու, նղինջ) եռացրեք (1 ճաշի գդալին՝ 1 բաժակ ջուր), 2 ճաշի գդալ այդպիսի խառնուրդին ավելացրեք խոզի (Բավի) փորի ճարպ, 1 ճաշի գդալ մեղյ և 2 ճաշի գդալ գերշակի յուղ:**

**Եթե ձեռքերի մաշկը կարմրել է՝**

**1. Ձեռքերը 1,5 ժամ պահեք Շեխուրի թուրմի մեջ:**

**2. Ձեռքերի Բերթափոխվող լոգանքներ արեք՝ մեկ տաք, մեկ սառը: Ձեռքերի խնամքը ձեր ու ձեր շրջապատի մարդկանց հանդեպ ունեցած հարգանքի արտահայտություն է, այն վկայում է մարդու բարեկայելչության ու մաքրասիրության մասին:**

## ԵՂՈՒՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եղունգները կազմված են եղջերաթաղանթից: Օրգանիզմի ամենատարբեր հիմանդրյունների հետևանքով կարող է դանդաղել եղունգների աճը, դրանք կարող են բարակել ու հնչուությամբ ջարդվել: Պատճառը հիմնականում նյութափոխանակության զանազան խանգարումներն են և սմնդի մեջ կալցիումի ու վիտամինների անբավարարությունը: Որպեսզի եղունգներն առողջ մնան, անհրաժեշտ է մշտական խնամք:

Չափազանց բարակ ու շուտ ջարդվող եղունգների վրա պետք է ամեն օր մի քանի կաթիլ Ա. վիտամին (յուղային) ու կիտրոնի հյութ կաթեցնել: Կաթիլը տրորեք այնպես, որ անցնի եղունգաթաղանթի ու եղունգի տակ:

Խորհուրդ է տրվում նաև ամեն օր մատները 10—15 րոպե արևածաղկի տաք ձեթի մեջ պահել, ապա տրորել տանինի 5 տոկոսանոց շաղախով:

Եթե ձեռքերը շատ են քրտնում, օգտագործեք հետևյալ միջոցը. 1 թեյի գդալ կաղնու կեղևի և 1 թեյի գդալ սրբությի վրա 2 բաժակ եռջուր լցրեք: Խառնուրդը 10 րոպե եռացրեք մարմանդ կրակի վրա, անմիջապես քամեր ու 2—3 թեյի գդալ քացախ ավելացրեք: Այնուհետև ձեռքերը մտցրեք տաք եփուկի մեջ:

## **ԲՈՒԺԻՉՉ ԽՈՏԵՐԸ ՄԻԿՈԶՆԵՐԻ ԴԵՄ (Մաշկի սճկիկային հիվանդություններ)**

Դեղաբուժությանը զուգահեռ, մաշկաբանին խորհուրդ ենք տալիս օգտագործել այնպիսի բուսական բուժամիջոցներ, որոնք հակաբորբոքային և հանգստացնող հատկություններ ունեն:

Ամեն պրոցեդուրայից առաջ ձեռքերն անհրաժեշտ է օճառով լավ լվանալ: Եփուկներն ու թուրմերը կարելի է օգտագործել մոտ 37 աստիճանում:

**ՇԱՄԲՈՒԿ:** Շամբուկի թուրմն օգտագործվում է լոգանքների համար: 2 ճաշի գդալ չորացած ու մանրած արմտիքը 10 րոպե եռացրեք 800 միլիլիտր ջրում ու բացեք 2 լիտր ջրով: Լոգանքի տևողությունը 10 րոպե է: Այնուհետև ձեռքերն ու ոտքերը չորացնել՝ առանց թուրմի շերտը սրբելու ու մաքրելու: Բուժման կուրսը՝ օրը 1 լոգանք մի քանի օր անընդմեջ:

**ԿԱՂՆԻԻ ԿԵՂԵՎ:** Եփուկ թրջոցների համար. 500 միլիլիտր ջրի մեջ լցորեք 2 ճաշի գդալ մանրած կաղնու կեղև ու 20 րոպե եփեք, հովկացրեք ու քամեք: Բուժման կուրս՝ 5—7 օր:

**ՎԱՅՐԻ ԴԱՂՁ:** Թրջոցների համար. թարմ դաղձի մի քանի ճյուղ լավ մանրեք ու տրորեք փայտե հավանգի մեջ, ավելացրեք քիչ ջուր: Ստացված խյուսը քսեք մաշկին: 10—15 րոպեից

թրջոցը անձեռոցիկով մաքրեք ու թողեք մաշկը չորանա: Քորի ու գրգռման դեպքում կարող եք լվանալ սառը ջրով:

Հակասնկիկային ազդեցություն ունեն բան-ջարեղենի որոշ տեսակներ: Վարունգի, սև բող-կի, գլուխ սոխի թարմ հյութը քսեք մաշկին ու թողեք չորանա (օգտագործեք սուանձին-առան-ձին): Մաշկը վերքեք ու ճաքեք շպիտի ունենա: Սնկիկային հիվանդությունների դեպքում կարող եք խմել բանջարեղենի զանազան հյութեր:

## ԿՈՇՏՈՒԿՆԵՐ

Կոշտուկները տգեղ ու ցավոտ գոյացություն-ներ են, որ առաջանում են մաշկի երկարան տրորվելու հետևանքով: Այս կոսմետիկական շե-ղումը վերացնելու համար լանորեն օգտագործ-վում են զանազան բուսական միջոցներ: Մաշկի կոշտացած մասերը բուժելու համար խորհուրդ ենք տալիս օգտագործել 20 րոպեանոց տաք լոգանք՝ օճառի փրփրով: Կոշտուկի փափկած եղջերաթաղանթը զգուշությամբ քերեք, մաշկը չորացրեք, վրան քսեք կարագ կամ քսուք: Կա-րող եք օգտագործել նաև հետևյալ խոտաքու-սերը.

**Պատուտակ.** 1—2 ճաշի գյալ թարմ կամ 7—10 ճաշի գյալ չորացրած պատուտակը լցրեք

կես լիտր ջրի մեջ ու եռացրեք 10 րոպե: Քամեզուց հետո տաք տերևները դրեք կոշտացած մասին: 20—30 րոպեից տերևները վերցրեք ու փափկած մաշկին քսեք ձիթապտղի, արևածաղկի ձեթ կամ կարագ:

**Խատուտիկ.** ամեն օր կոշտուկին քսեք խատուտիկի թարմ հյութ, մինչև լիովին անհետանա: Հյութը կարող եք առանազ ինչպես խատուտիկի տերևներից, այնպես էլ արմուխիցից:

**Գյուլս սախ.** կոշտուկը տրորեք խորոված սխի շերտերով կամ կանաչ սխի տերևների տաք խյուսով: Ծրջակա առողջ մաշկին փաթաթան դրեք՝ այրվածքներից պաշտպանելու համար: Միքանի ժամից տաք ջրի մեջ կոշտուկից քերեք փափկած եղջերաթաղանթը: Գործողությունը կըրկընեք օրը 2 անգամ, մինչև կոշտուկը լրիվ անհետանա:

**Սխտար.** մի պճեղ սխտորը մասրեք, տրորեք նույնքան խոզանարափի հետ ու քսեք կոշտուկին: Գործողությունը կրկնեք մինչև կոշտուկի վերանալը:

**Լալիկ.** կոշտուկի եղջերային մասը տրորեք լոլիկի շերտով կամ մածուկ քսեք վրան: Լոլիկի հյութը բուժում է նաև ոտքերի սնկիկային հիվանդությունը:

**Թուրինձի** կեղևով կամ շերտատած գյուլս սախսվ կարող եք տրորել արմունկների, ծնկնե-

ոի ու ձեռնափերի կոշտացած մասերը: Այնու-  
նեւուն կեղևը թողեք մաշկի վրա և ամրացրեք  
լեյկոսպեղանիով: 20 բոպեից փափկած մաշկը  
շփեք պեմզայով, տաք ջրով լվացեք, քսեք  
ձիթապտղի, արևածաղկի ձեր կամ կարագ:

## ԶՐԱՅԻՆ ՊՐՈՑԵԴՈՒՐԱՆԵՐ

Թրջոցներ օգտագործում են այն դեպքում,  
երբ անհրաժեշտ է թարմացնել չոր, ծերացող  
մաշկը: Տաք թրջոցները բարեկավում են արյան  
շրջանառությունը, թարմացնում մաշկը, լայնաց-  
նում ծակոտիները, լավացնում դեմքի գույնը:

Թրջոցների համար նախապատրաստում են  
բուժիչ դեղաբույսերի թուրմ (2 տրցակ խոտին՝ 2  
լիտր եռջուր): Թուրմը պետք է ծածկել կափա-  
րիչով ու թողնել 10 րոպե: Ապա քամեք, լցրեք  
ամանի մեջ, որը պիտի տեղավորեք տաք ջրով  
թասում: Անհրաժեշտ է սառը ջրով մի  
աման ևս: Թրջոցները դրեք դեմքը դիմահար-  
դարման կաթով լվանալուց հետո, հանգիստ  
վիճակում, թուղանալով, նույնիսկ ուղքերը փոքր-  
ինչ բարձր պահած: Թավշի կտորը կամ շերտ-  
շերտ ծալած թանգիֆը թրջեք տաք թուրմի մեջ,  
մզեք ու դրեք ճակատին, կզակին, այտերին և  
պարանոցին: 10 րոպեից թրջոցը հանեք ու դեմ-

քին դրեք նախապես սառը ջրով թրջած խավոտ  
հաստ սրբիչ:

Այս գործողությունը կրկնեք 3—4 անգամ,  
մինչև զգաք, որ ձեր դեմքն ու մարմինը լիովին  
հանգստացել են:

Տաք թրջոցները հակացուցված են թարախա-  
բշտիկների, էկզեմիայի, լայնացած մաշկային  
մազանոթների, բարձր զարկերակային ճնշման  
դեպքում:

Լորենու, սամիթի, երիցուկի թուրմերը հան-  
գրստացնող ազդեցություն ունեն, վարդի թուրմ  
առաջարկվում է լայնացած ծակոտիների դեպ-  
քում:

Նորմալ մաշկի դեպքում խորհուրդ ենք տա-  
լիս հաջորդաբար օգտագործել տաք ու սառը  
թրջոցներ: Չոր ու ճարպակետիկներով մաշկի  
դեպքում՝ նույնապես, բայց նախապես ջրի մեջ  
անհրաժեշտ է ավելացնել խմելու սողա (1 ճա-  
շի գդալը՝ 1 բաժակ սառը ջրին): Թոշնած  
ու թույլ մաշկի դեպքում օգտագործեք կամ տաք,  
կամ սառը թրջոցներ:

## ԾՈԳԵՀԱՐՈՒՄ

Ծոգեհարումը խորհուրդ է տրվում ճարպու  
ու կոպիտ (սև կամ սպիտակ կետերով) պատա-  
նեկան պղուկներով մաշկի դեպքում, առաջարկ-

Վում է նաև աղտոտված միջավայրում աշխատող կանանց: Ծոգեհարման համար առավել հաճախ օգտագործում են երիցուկը, կարելի է նաև դաղձը, եթե մաշկը կարմրում է, կամ էլ տուղտը, եթե մաշկը չոր է ու թոշնելու հակում ունի:

Օշինդրը բարելավում է մաշկի արյան շրջանառությունը և թարմացնում այն, օգտագործվում է կնճիռների դեմ:

Սպիտակ հազարթերթիկն օգտագործվում է չոր և թարշամող մաշկի դեպքում, բարելավում է արյան շրջանառությունը:

Գալլուկը բարելավում է էպիթելացումը, օգտագործվում է կարմրությունների և նյարդային ծագում ունեցող ցանի դեպքում:

Ծոգեհարվելու համար 1 տրցակ խոտը պետք է լցնել 1 լիտր եռջրի մեջ, գլուխը հակել ամանի վրա ու ծածկել սրբիչով:

Անհրաժեշտ է իմանալ հետևյալը.

1. Եթե մաշկը չոր է, շոգեհարվելուց առաջ պետք է քսել յուղու քսուք:

2. Ծոգեհարման տևողությունը կախված է մաշկի տեսակից.

ՆՈՐՄԱԼ մաշկ. 5 րոպե՝ տաք գոլորշու վրա:

ԶՈՐ մաշկ. 2—3 րոպե՝ ոչ այնքան տաք գոլորշու վրա:

ՃԱՐՊՈՏ կամ ԾԱՏ ԿԵՂՏՈՏ մաշկ. 8—10  
րոպե՝ տաք գոլորշու վրա:

Շոգեհարվելուց հետո դեմքն անմիտացն է  
հովացնել սառը ջրով:

## ԼՈԳԱՆՔՆԵՐ ԲՈՒԺԻՉ ԽՈՏԵՐՈՎ

«Բուժիչ է ջրի շիթը, այն մեղմում է տեղ-  
դաշեռը. այն բոլոր հիվանդություններն է բու-  
ժում», — գրված է հին հնդկական մի տրակ-  
տատում: Չուրը, բարեկավելով արյան շրջանա-  
ռությունը և լայնացնել ծակոտիները, նպաս-  
տում է դեղաբույսերի բուժական ներգործու-  
թյան ուժեղացմանը: Տնային պայմաններում  
բուժական խոտաբույսերի եփումկները պատ-  
րաստվում են հետևյալ կերպ. 1 կգ ջարմ, կըս-  
րատած ու մանրած խոտին ավելացնում եք 3—  
4 լիտր սառը ջուր ու թողնում 5—10 րոպե, ա-  
պա 3 րոպե եռացնում և փակած վիճակում  
թրմում 30 րոպե: Քամած եփումկը լցնում եք  
ջրի մեջ լոգանքից անմիջապես առաջ: Խոր-  
հուրդ ենք տաղիս լոգանք ընդունել շաբաթը 1  
անգամ, ընթրիքից 2 ժամ հետո, քննելուց 1—1,5  
ժամ առաջ: Ջրի ջերմաստիճանը պիտի լինի  
36—37 աստիճան, լոգանքի տևողությունը՝ 20—  
30 րոպե: Գլուխն ու կրծքի հատվածը պիտի  
ջրից դուրս լինեն:

Լոգանք ընդունելուց առաջ մարմինը հարկավոր է օճառով լավ լվանալ, որպեսզի պաշտպանական-ճարպաթթվային թաղանթը հանվի ու հեշտանա բուժանյութի ներթափանցումը ծակոտիներով։ Լոգանքից հետո մարմինը պետք չէ ցայել ջրով։

Կորենու ծաղիկը ուժեղացնում է քրնարտադրությունը, հանգստացնում է նյարդային համակարգը և կամխում անքնությունը։

Հազարավարդը և օշինդրը բարեկավում են արյան շրջանառությունը, թարմացնում և առուցացնում արագ հոգնող մարդկանց նյարդային համակարգը, օգտակար են նաև կնճուապատմաշկի դեպքում։

Երիցուկը և գայլուկը հակաբորբոքային ազդեցություն ունեն, բարեկավում են մաշկի էպիթելացումը, դրանց թուրմով լոգանքները օգտակար են բորբոքված, չոր ու ճաքճքող մաշկի դեպքում։

Եղեսպակը և կաղնու կեղնը նեղացնում են ծակոտիները, օգտագործվում են ճարպու և շատ քրտնող մաշկի դեպքում։

Դաղձը և հաղարջնու տերնները մրսածության դեմ պայքարելու ամենաարդյունավետ միջոցն են, բացի այդ, դաղձը հանգստացնում է գրգուված մաշկը և վերացնում քորը։

Վաղենակը (նարգիզ) արագացնում է վեր-

քերի սպիացումը, առոյգացնում, բարեկավում է մաշկի էակիթեղացումը:

Ծորենի, զարու, եզիպտացորենի թեփուկները հանգստացնում են բորբոքված մաշկը, փափկացնում այն և վերացնում քորը: Լոգանքի ջուրը պատրաստվում է հետևյալ կերպ. վերցրեք բանզիֆե մի փոքրիկ պարկ, մեջը լցրեք այդ թեփուկներից երկու բուռ ու պարկը լոգնոցի վերևում ծորակից կախեք այնպես, որ հոսող տաք ջուրն անցնի միջով: Լոգանքից հետո պեսը չէ սրբվել:

Խառը խոտերը թարմացնող հերգործություն են ունենում. երիցուկի, եղեսպակի, հազարավար դի, հազարաթերթիկի, լորենու ծաղկի, դաղձի խառնուրդից 250 գրամին ավելացրեք կես լիսոր եռջուր, ծածկած վիճակում թրմեք 90 րոպե, ապա լցրեք լոգնոցը:

Մի քանի խորհուրդ նրանց, ովքեր կայցելեն «Կանաչ դեղատուն»:

Անհրաժեշտ է հիշել, որ բուժական նյութերի պարունակությունը խոտաքույսերի մեջ օրվա ընթացքում փոփոխվում է: Ուստի, ավելի լավ է դրանց վերգետնյա մասը (տերևները, ցողունը, ծաղիկները և այլն) հավաքելու օրվա առաջին կեսին, ցողը չորանալուց անմիջապես հետո: Ամպամած օրերին բուժական նյութերի պարունակությունը նվազում է: Արմատները և

կոճղարմատները կարող եք հավաքել ցանկացած եղանակին, բայց միայն աշնանը, երբ վերգետնյա մասը թոշնում է: Բողբոջները հարուառ են խեժանյութերով, երբ արդեն ուսած են լինում, իսկ տերևներից պիտանի են անհրաժեշտ հասնություն ունեցողները: Կեղևը հավաքելու լավագույն ժամանակը հյութաշարժության շրջանն է:

Չի կարելի բուժախոտեր հավաքել ճամփեղրերից, քաղաքի տարածքում, քանի որ բույսերը ճերծծում են ավտոմեքենաների արտանետած գազերը և զանազան այլ թունավոր նյութեր:

Բույսերը պետք է կտրել դանակով կամ հատիչով, չի կարելի արմատահան անել: Տերևները կարող եք հավաքել կոթերով կամ առանց կոթերի: Մանրատերն որոշ բուժախոտակներ կարող եք ամբողջական վիճակում հատել, իսկ ծաղիկներն ու կոկոնները պիտի պոկեք ձեռքով կամ հատեք:

Պտուղներ և ուրմեր. հյութեղ պտուղները պիտի հավաքեք ձեռքով՝ աշխատելով շճմեն դրանք, իսկ չորացած պտուղները պոկեք բույսի հետ միասին և լրիվ չորացնելուց հետո աջատեք անհրաժեշտ մասերը:

**Արմտիքը և կոճղարմատը լվացեք, մաքրեք**

Վրան եղան հողը, անջատեք ցողունը և փտած մասերը:

Կեղևը հավաքելու համար մատղաշ ճյուղերի վրա կիսաշրջանաձև կտրվածքներ արեք՝ մեկը մյուսից 25—30 սմ հեռավորությամբ, ապա դրանք երկայնակի կտրվածքներով միացնեք իրար: Ծյուղի այդ շերտերը պլոկեք, բայց անմիջապես մի պոկեք, այլ յողեք խառամեն:

Բուսատեսակները չորացրեք ծածկի տակ կամ լավ օդափոխալող շինության մեջ: Եթե շիվերը չեն ճկվում, լավ շարդվում են, որենք արդեն կարող եք պահել: Ցանկալի է, որ բույսերը պահեք ապակե ամանների մեջ, հով տեղում:

## ԲՈՒՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ՄԶՈՒԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Թուրմերը և եփուկները պետք է պատրաստել ջնարակած ամաններում: Թուրմերը եռացրեք 15, իսկ եփուկները՝ 30 րոպե, հովացրեք սենյակային ջերմաստիճանում. յուրմերը՝ 45, եփուկը՝ 15 րոպե:

Թուրմերը պատրաստում են բույսերի փափուկ մասերից՝ տերևներից ու ծաղիկներից, ինչպես և խոտաբույսերից, իսկ եփուկները՝ պինդ մասերից՝ արմտիքից, կոճղարմատից, կեղևից, հատիկներից:

**Մգուկմները կարող եք օգտագործել յարմ  
վիճակում կամ պահել սառնարանում 2 օր:**

## **ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱԿԱՐԳԵՐԸ**

Նա, ով մտահոգվում է իր արտաքինի համար և ցանկանում երխուասարդ երևալ, պիտի հիշի հինավորց ասացվածքը. «Մենք այն ենք,  
ինչ ուտում ենք»: Օրգանիզմին անհրաժեշտ վիտամինների քանակը պիտի համապատասխանի օրվա ընթացքում ծախսվող եներգիայի քանակին: Մասնագետները գտնում են, որ մրգեղենի սալաթից ու խոտերով թրմված թեյից կազմված նախաճաշը օրգանիզմին ապահովում է գեղեցկության համար անհրաժեշտ բոլոր վիտամիններով: Այդպիսի սալաթի համար պետք է ունենալ հերկուլես կամ սպիտակաձավար, մեղր, ընկույզ, մրգեր կամ հատապտուղներ:

1. 2 ճաշի գդալ հերկուլեսը թրջեք 4 ճաշի գդալ եռացած ու սառեցրած ցրում: 5—10 րոպենից ավելացրեք 1 ճաշի գդալ մեղր, 200 գրամ թարմ հատապտուղների (մորի, ելակ, հաղարջ, բալ, սալոր և այլն) խյուս և 2 ճաշի գդալ մանրած ընկույզ:

2. 2 ճաշի գդալ հերկուլեսին ավելացրեք 4 ճաշի գդալ ջուր, 2 քերած խնձոր, 1-ական ճաշի գդալ մեղր և սերուցք:

3. 2 ճաշի գդալ սպիտակաձավարը թրջեք  
4 ճաշի գդալ եռացրած ու սառեցրած ջրում:  
5—10 րոպեից ավելացրեք 2 քերած խնձոր, 2  
ճաշի գդալ մորու կամ հաղարջի (կիտրոնի, նա-  
րբնջի, յուրինջի) հյութ, 2-ական ճաշի գդալ  
մանրած ընկույզ և խոտացրած կաթ:

Առույգացնող ըմպելիքը պատրաստում են սև  
թեյից և հավասար քանակի բուժիչ խոռոքով-  
սերից: Ըմպելիքը եփում և օգտագործում են  
թեյի պես:

1. Հավասար բաժիններով արոսենու պտուղ  
և մասուր.

2. 1 բաժին արոսենու պտուղ և 3 բաժին ե-  
ղինջ.

3. 1 բաժին սև հաղարջենու տերևներ, 1 բա-  
ժին մասուր, 3 բաժին գազարի սերմ, 3 բաժին  
եղինջ.

4. Հավասար բաժիններով մոշ, մորի, գետ-  
նաելակ, սև հաղարջ, ուրց, սրոմունդ և շո-  
շանի թերթիկներ:

Չորացրած բույսերը մանրեք արճադացով,  
խառնեք, լցոնեք ապակե բանկայի մեջ ու դրեք  
մույթ տեղ: Ըմպելիքը պատրաստեղու համար  
անհրաժեշտ է 1 թեյի գդալ այդ խառնուրդից և  
1 թեյի գդալ թեյ՝ 1 բաժակ եռման ջրի համար:  
Արդեն 1 ամսից դուք կզգաք այդպիսի հափա-  
ճաշի երիտասարդացնող ազդեցությունը:

## ԾԱՇԽՑ ԱՐԱՋ

Ծաշելուց 15—20 րոպե առաջ պետք է խմել 1 բաժակ հանքային ջուր: Ծաշը պետք է սկսել կանաչեղենի սպարեից, որին կարող եք ավելացնել ձեր կամ մաղոնեզ:

1. Մաքրեք Բում ճակնդեղը, քերեք, ավելացրեք տրորած պիստոր և մաղոնեզ:

2. Եղինջի մատղաշ տերևները լվացեք նախ եռման, ապա ստոր ջրով, մանր կտրատեք, աղ արեք, ավելացրեք վարունգ ու բրովասեր:

3. Եղինջի ու խատուիկի մատղաշ տերևները նախնական մշակումից հետո մանր կը տրատեք, ավելացրեք լոռամրգու կամ խնձորի հյութ (1 գդալ) և 1 գդալ էլ աղաջուր, եթե ըգգաք, որ աղը պակաս է:

Ծաշելիս ձեզ Բամար զկխավոր կանոնը թող լինի հետևյալը. այլևս մի կերեք, երբ զգում եք, որ կարելի էր ելի ուտել:

Աշխատանքային օրվա վերջում կարող եք խմել թարմացնող կոկտեյլներ՝ մրգերից ու բանջարեղենից:

1. Խառնեք 2-ական ճաշի գդալ նեխուրի, մաղաղանոսի ցողունի և կիսորոնի հյութ:

2. Հավասար քածիններով խառնեք գազարի և նարնջի հյութ ու մեղր ավելացրեք:

3. Դադահ 3 ցողուն մանրեք ու խառնեք 2

ճաշի գդալ մեղրի մես, ապա ավելացրեք կես  
բաժակ սոնու և կես բաժակ կիտրոնի հյութ:

## ԸՆԹՐԻՔ

Մրգի սպառ (Բում ճակնդեղ, խնձոր, տանձ,  
կիտրոնի կամ Բատապտուղների հյութ, մեղր)  
և վիտամինային թեյ: Կարող եք ավելացնել  
100 գրամ ոչ յուղոտ կաթնաշոռ կամ 100 գրամ  
տավարի խաշած միս: Այսպիսի սննդակարգը  
կարող է տևել 2—3 օր կամ 2—3 շաբաթ: Եթե  
ավանդական սննդակարգի մեջ մոցնենք այս  
հյութերից կամ սպառներից թեկուզն մեկը,  
արդյունքներն ակնառու կլինեն արդեն 2—3 ամ-  
սից:

Մաշկի թարմությունը պահպանելու հրաշագի  
միջոց է անորի խմած և բաժակ ջուրը (որի մեջ  
եփել եք բանջարեղեն):

## ՄԵՂՐԸ ԵՎ ԿՈՍՄԵՏԻԿԱՆ

Օրգանիզմը հեշտությամբ ու ամրողապես է  
յուրացնում մեղրը իմշակես ուտելիս, այնպես էլ  
մաշկին քսելու դեպքում: Մեղրը մոտ 80 անուն  
զանազան հյութեր է պարունակում: Մեղրի բղոր  
տեսակների գլխավոր բաղադրամասը ածխա-  
ցրեն են՝ գլյուկոզ (խաղողաշաքար) և ֆրուկ-

**տոզա (մրգաշաքար):** Բացի այդ, մեղրը պարունակում է նաև այլ արժեքավոր նյութեր, ֆերմենտներ՝ կալիումի, կաղցիումի, նատրիումի աղեր, մագնեզիում, երկաթ, ֆոսֆոր, յոդ, օրգանական բթուներ, վիտամիններ, կենսագեններիկ խթանիչներ: Հանքային աղերի պարունակությամբ մեղրը համարժեք է արյանը:

Մեղրն ունի հակամանրէական (վարակագերծող) հատկություններ, որոնք նկատի են առնվում հնուց ի վեր՝ սննդամթերքի պահանջման համար: Նույն այդ հատկության վրա է հիմնված նաև մեղրի բուժական կիրառությունը՝ հատկապես վերքերն ու խոցերը բուժելիս: Մեղրի լուծույթով բերանը ողողելիս ոնչանում են բերանի խոռոչի մանրէները, դրա համար էլ այդպիսի բորբոքումների դեմ օգտագործվող եղեսպակի թուրմից մի քիչ մեղր են ավելացնում: Թարախապակարների վրա դնում են ալյուրով շաղախված մեղր: Այն մտնում է հակակնճիռային և դեմքի մաշկը թարմացնող դիմակների բաղադրակազմի մեջ:

1. 100 գրամ մեղրը շաղախներ կիրրոնի հյութով: Ստացված զանգվածը բարակ շերտով քսեր դեմքին ու թողեք 10—15 րոպե, մետո լվացեք սառը ջրով (չոր ու նորմալ մաշկի համար):

2. 2 ճաշի գդալ ալյուրը շաղախներ 1 ձվի հարած սպիտակուցով և ավելացրեք 1 յուրի գդալ

**Մեղք:** Ստացված խմբանման զանգվածը բակը նախապես մաքրած դեմքից ու թողեք 10—15 րոպե, ապա լվացեք սովորական ջրով: Այս դիմակն առաջարկում էմք չոր ու նորմազ մաշկին՝ կնճիռների առաջացումը կանխելու համար:

3. Խառնեք 50 միլիլիտր օղի (40 գրամ ըստպիրտ) և 100 գրամ թեթևակի տաքացրած մելլը, շաղախեք ալնքան, որ միասուարր զանգված առացվի: Դիմակը դեմքին պահեք 10—12 րոպե: Այն մաքրում ու փափկացնում է մաշկը և տնի մանրէազերծող ազդեցություն:

Դեմքի մաշկի վրա խիստ բարերար ազդեցություն է ունենում մեղքաջուրը (1 ճաշի գդալ մեղրին՝ 2 բաժակ տաք ջուր): Խորհուրդ ենք տալիս քնելուց առաջ դրանով 5—7 րոպե լվանալ դեմքը, հետո ցողել տաք ջրով (առանց օճառի): Մեղքաջուրը սնուցում է մաշկը, այն դարձնում թավշանման, հարթում կնճիռները:

Զեռքերի մաշկի չորությունն ու թեփուտությունը վերացնելու համար կարող եք օգտագործել հետեւալ դեղատունը. 3 ճաշի գդալ գիցերին, 1 թեյի գդալ անուշաղոի սպիրտ, քիչ (մատի ծայրով) բորակ, 1 թեյի գդալ մեղք: Այս ամենը շաղախել, խև օգտագործելուց առաջ անպայման թափահարելով խառնեք:

## ՑԱՆԿ

<b>Աշխարհի շափ ճիւ մի արվեստ</b>	<b>3</b>
<b>Մազերը կնոջ լովագույն զարդարանքն եւ</b>	<b>4</b>
<b>Քսուքներ մազերի համար</b>	<b>8</b>
<b>Մազերի ներկում</b>	<b>8</b>
<b>Դեմքի մաշկը</b>	<b>10</b>
<b>Մեր նախատասերի լոսյոնները</b>	<b>10</b>
<b>Ճարպու մաշկի համար</b>	<b>11</b>
<b>Ալսեն և Կլեոպատրայի խորհուրդը</b>	<b>13</b>
<b>Օճառի փոխարեն</b>	<b>14</b>
<b>Երբ արեց շատ ուժեղ է</b>	<b>15</b>
<b>Պեղենները և բծեր</b>	<b>15</b>
<b>Մազիկները կոսմետիկայում</b>	<b>17</b>
<b>Կոսմետիկա մարզից</b>	<b>19</b>
<b>Հասապտուղների պիմակներ</b>	<b>20</b>
<b>Բանջարեղենի պիմակներ</b>	<b>21</b>
<b>Մրգերի պիմակներ</b>	<b>22</b>
<b>Աշխերի խնամքը</b>	<b>23</b>
<b>Ո՞ի մոացե՛ պարանոցի մասին</b>	<b>25</b>
<b>Կեղեցիկ ձեռին</b>	<b>26</b>
<b>Խզունզների մասին</b>	<b>28</b>
<b>Բուժիչ խոտերը միկոզների դեմ</b>	<b>29</b>
<b>Կողառուկներ</b>	<b>30</b>
<b>Հրայիճ պրոցեդուրաներ</b>	<b>32</b>
<b>Ծովենարում</b>	<b>33</b>
<b>Լոգանեցներ բռնիչ խոտերով</b>	<b>35</b>
<b>Բաւական հումքից մզուների պատրաստման կո- նցները</b>	<b>39</b>
<b>Դիզեցիոնը սննդակարգերը</b>	<b>40</b>
<b>Ճաշից առաջ</b>	<b>42</b>
<b>Ընթրիք</b>	<b>43</b>
<b>Սեղը և կոսմետիկան</b>	<b>43</b>
<b>Վերշարան</b>	<b>46</b>

# **Թարգմանիչ և կազմող՝ ՆԵՐՍԵՍ ԱՐԱԲԵԿՅԱՆ**

**Խմբագիր՝ Օ. Դ. Միքայելյան  
Նկարիչ՝ Հ. Մ. Մակարյան  
Տեխ. խմբագիր՝ Ռ. Մ. Պողոսյան  
Սրբագրիչ՝ Ա. Ս. Ասարյան**

**«ԳԻՏԵԼԻՔ»  
«ԱՆԱՀԻՏ-2» գրանիրատարակչական կոռ-  
պերաաիվ:**

**Պատվեր՝ 405: Ֆորմատ՝  $60 \times 84^{1/32}$ : Տառաաեռակը՝  
«Նորք»: Տպաքանակը՝ 5 000: Գինը՝ պայմանագրային,**

---

**Տոլագրված է ՀՀ Նախարարների խորհրդի «Պարբերա-  
կան» հրաաարակշության տպաքանում,  
Երևան-23, Արշակունյաց պող., 2:**

